ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ապրիլի 2015թ. **N___-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետի 5-րդ ենթակետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ «Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված «Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ծարավ Աղբյուրի 55/6 հասցեին հարակից տարածքում երիտասարդ մասնագետների համար բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման» ծրագրին:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/26 հասցեում գտնվող, 6.84քմ մակերեսով շինությունը և 4500քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 20.03.2015թ. հ.20032015-01-0184 վկայական) (այսուհետ՝ գույք) ուղղակի վաճառքի ձևով օտարել «Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությանը (այսուհետ՝ գնորդ):

3. Ուղղակի վաճառքի ձևով օտարման ենթակա գույքի վաճառքի գին սահմանել՝ 20 758 000 ՀՀ դրամ (20 358 000 ՀՀ դրամ՝ հողամասի կադաստրային արժեք, 400 000 ՀՀ դրամ՝ 2015 թվականի ապրիլի 7-ի դրությամբ գնահատված շինության շուկայական արժեք):

4. Երևանի քաղաքապետին՝ գնորդի կողմից գույքի վաճառքի գումարի վճարումից հետո կնքել առուվաճառքի պայմանագիր՝ սույն որոշման հավելվածով սահմանված հիմնական պայմաններով:

5. Գնորդը պարտավոր է սույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված գույքի գինը վճարել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության արժույթով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության նախագահը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 20.03.2015թ. հ.20032015-01-0184 վկայական) Ծարավ Աղբյուրի փողոցի հ. 55/26 հասցեում գտնվող, 6.84 քմ շինությունը և 4500 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 24-ի հ. 819-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության հաշվեկշռում հաշվառված՝ Երևան քաղաքի Ծարավ Աղբյուրի 55ա հասցեում գտնվող 181 800 000 (հարյուր ութսունմեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ սկզբնական արժեքով շենքերն ու շինությունները, դրանցով զբաղեցված և սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ պետական սեփականություն հանդիսացող 4.2091հա մակերեսով հողամասը (որի մեջ ներառված է նաև քննարկվող գույքը այսուհետ՝ գույք) անհատույց սեփականության իրավունքով հանձնվել է Երևանի քաղաքային համայնքին:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 9-ի հ. 208-Ա որոշմամբ վերոնշյալ հասցեում գտնվող գույքն որպես նվիրատվություն ընդունվել է և ամրացվել է «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 20.03.2015թ. հ.20032015-01-0184 վկայականի տվյալների՝ Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/26 հասցեում գտնվող գույքն սեփականության իրավունքով պատկանում է Երևան համայնքին:

«Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությունն իրականացնում է բնակարանային ապահովության սոցիալական ծրագրեր, որոնց շրջանակում նախատեսվում է կառուցել ժամանակակից ճարտարապետական լուծումներով բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքային համալիրներ, որոնց բնակարանները շուկայականից անհամեմատ ցածր գներով բաշխվելու են Հայաստանի Հանրապետության երիտասարդ մասնագետներին:

Հաշվի առնելով բնակարանի կարիքավորների հերթացուցակում հաշվառված երիտասարդ մասնագետների մեծաքանակ դիմումները կազմակերպության կողմից նախատեսվում է վերոնշյալ ծրագրի շրջանակներում կառուցված և /կամ/ կառուցվող թվով 14 բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքերի հարևանությամբ կառուցել ևս մեկ շենք, որի կառուցման և

սպասարկման համար անհրաժեշտ է 4500 քմ մակերեսով հողատարածք: Բնակելի համալիրի շինարարությունը նախատեսվում է իրականացնել 2015 թվականի օգոստոսի 1-ից և ավարտել 2018 թվականի ապրիլ ամսին: Բնակելի համալիրն ունենալու է մեկ, երկու, երեք, չորս և հինգ սենյականոց բնակարաններ, ժամանակակից արտաքին լուսավորություն, իսկ շենքի հարակից տարածքն ամբողջությամբ բարեկարգվելու է, նորացվելու են կոմունիկացիոն համակարգերը, կառուցվելու են մանկական խաղահրապարակներ և կանաչապատ հանգստի գոտիներ: Բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքը լինելու է մոնոլիտ-երկաթբետոնյա: Այն ունենալու է 14 բնակելի հարկ, ինչպես նաև ստորգոտնյա ավտոկայանատեղեր: Յուրաքանչյուր մուտքում լինելու է 2 վերելակ: Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվեն ավելի քան 550 աշխատատեղեր:

«Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության կողմից նախատեսվող բնակարանաշինական ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի 4.4 մլրդ ՀՀ դրամ:

Անշարժ գույքի գնահատում իրականացնող կազմակերպության կողմից քննարկվող գույքը գնահատվել է 43 000 000 /քառասուներեք միլիոն/ ՀՀ դրամ, սակայն նկատի ունենալով, որ հասարակական կազմակերպությունը իրականացնում է սոցիալական ծրագիր, որը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության երիտասարդ մասնագետներին շուկայականից անհամեմատ ցածր գներով ձեռք բերել բնակարաններ, ապա նպատակահարմար է գտնվել նախապատրաստելու Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/26 հասցեում գտնվող 6.84քմ մակերեսով շինությունը և 4500 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով «Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությունը 20 758 000 ՀՀ դրամ (20 358 000 ՀՀ դրամ՝ հողամասի կադաստրային արժեք, 400 000 ՀՀ դրամ՝ 2015 թվականի ապրիլի 7-ի դրությամբ գնահատված շինության շուկայական արժեք) արժեքով օտարելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2015 թվականի ապրիլի -ի
N -Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վաճառողը	Երևանի քաղաքային համայնք
Գնորդը	«Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ գնորդ)
Առարկան	շինության և հողամասի առուվաճառքի պայմանագրի կնքում
Իրականացվելիք ծրագիրը	գնորդն իրականացնում է բնակարանային ապահովության սոցիալական ծրագրեր, որոնց շրջանակում նախատեսվում է կառուցել ժամանակակից ճարտարապետական լուծումներով բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքային համալիր, որի բնակարանները շուկայականից անհամեմատ ցածր գներով բաշխվելու են Հայաստանի Հանրապետության երիտասարդ մասնագետներին: Բնակելի համալիրն ունենալու է մեկ, երկու, երեք, չորս և հինգ սենյականոց բնակարաններ: Բնակելի համալիրի շինարարությունը նախատեսվում է իրականացնել 2015 թվականի օգոստոսի 1-ից և ավարտել 2018 թվականի ապրիլ ամսին: Բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքը լինելու է մոնոլիտ-երկաթբետոնյա: Այն ունենալու է 14 բնակելի հարկ, ինչպես նաև ստորգետնյա ավտոկայանատեղեր: Յուրաքանչյուր մուտքում լինելու է 2 վերելակ: Բնակելի համալիրն ունենալու է ժամանակակից արտաքին լուսավորություն, իսկ շենքի հարակից տարածքն ամբողջությամբ բարեկարգվելու է, նորացվելու են կոմունիկացիոն համակարգերը, կառուցվելու են մանկական խաղահրապարակներ և կանաչապատ հանգստի գոտիներ: Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվեն ավելի քան 550 աշխատատեղեր: Բնակելի համալիրի առաջին հարկն օգտագործվելու է հասարակական սպասարկման նպատակով (առևտրի, կենցաղ-սպասարկման կենտրոններ և այլն): Բնակարանային ապահովության սոցիալական ծրագրի իրականացման ընդհանուր արժեքը կկազմի շուրջ 4,4 մլրդ. դրամ:
Պայմանագրի կնքման հետ կապված ծախսերը, այդ թվում՝ նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման ծախսերը	գնորդի հաշվին
Կողմերի պատասխանատվությունը	Կողմերը օրենքին համապատասխան պատասխանատվություն են կրում առուվաճառքի պայմանագրի պայմանների խախտման համար